

**Ազգային ժողովում քաղաքական կոնսենսուսի, բանավեճի և հաղորդակցության կարողությունների հզորացում**

**Strengthening National Assembly in Building Political Consensus, Debate and Communication**

Համառոտագիր  
Policy Brief

# Ինչպես կարող են համատեղ իրականացվող ծրագրերը կանգնեցնել քաղաքական արյունահոսությունը

# Համառոտագիր



Մարդկային  
զարգացման  
միջազգային  
կենտրոն

## «Շուրա, Դուք ցլամարտ տեսե՞լ եք»

Հայաստանի քաղաքական դաշտն անհիմն լավատեսության դեպքում անգամ դժվար կլինեք բարիդրացիական կամ ներդաշնակ անվանել: Դժվար է նաև առկա քաղաքական դիսկուրսն ապագայամետ կոչել: Լավագույն դեպքում «նորերը» լայն թափով շարունակում են «մերժել» հներին, «հները» շարունակում են արժանիորեն և ոչ արժանիորեն լուտանքներ հասցեագրել «նորերին»: Արդյունքում, հանդիսատեսի վերածված հասարակությունը շարունակում է զարմանալ, «որ այս աշխարհում ոչինչ չի փոխվում»... Սա մեր և ձեր այսօրվա քաղաքական իրականությունն է, որ մեծամեծ խոսքերի ներքո լավ թաքցրած մանկապարտեզ է հիշեցնում:

Հասարակության ապաքաղաքական հատվածի համար այս իրականությունը միգուցե և զվարճալի լինեք, եթե այսչափ վտանգավոր չլինեք: Մենք Եվրոպայի կենտրոնի աշխարհագրությունը չունենք, որ քաղաքական տեսարանները մեծ վտանգներ չպարունակեն. իվերջո, ամեն օր համընդհանուր կուռ կոնսոլիդացիայի պատրաստ լինելու հրամայականը դեռ ոչ ոք չեղյալ չի հայտարարել: Հայաստանի համար, ավելին, այդ հրամայականը յուրաքանչյուր բացվող առավոտ ավելի բարձր է հնչում Մոլվեսից, Արենիից, Եղնիկներից ու Մեխակավանից:

## Համահայկական օլիմպիական խաղեր. նոր հնարավորություն

Ամեն դեպքում մենք չենք ալարի և յուրաքանչյուր պատեհ դեպքում մատնացույց կանենք այն առիթը, որից կարելի կլինի կառչել, եթե վերբալ բռնցքամարտից «արյունաքամ» քաղաքական ուժերը որոշեն համագործակցության ճանապարհը բռնել:

Օգոստոսին Ստեփանակերտում կայանալու է Համահայկական օլիմպիական խաղերի բացումը: Սա կարող է հերթական լավ առիթը լինել քաղաքական դաշտում համերաշխության մթնոլորտի ձևավորման, ընդհանուր նպատակի շուրջ համատեղ քայլեր ձեռնարկելու համար: Մենք այս կարևոր միջոցառմանը միջազգային հնչեղություն տալու խնդիր ունենք, այդ պատճառով պետք է փորձենք ապահովել օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությունը բացման արարողությունը: Սա նաև հնարավորություն է՝ կրկին անգամ մի լավ ապտակ հասցնելու Ադրբեյջանի անփառունակ «սևցուցակային» քաղաքականությանը: Հայաստանի տարբեր քաղաքական ուժեր, ցանկության դեպքում, իսկապես կարող են աջակցել այս գործընթացին, համագործակցել միմյանց հետ հանուն ընդհանուր շահի: Այլ հարց է, թե ինչպիսի մեխանիզմներով կարող ենք կայացնել համագործակցությունը և աջակցություն ցուցաբերել կազմակերպչական աշխատանքներին:

Այսօր արդեն ձևավորվել է համապատասխան կոմիտե, որն զբաղվում է կազմակերպչական հարցերով: Գործընթացին արդեն ներգրավվել են ԱԺ պատգամավորներ, ՀՀ և Արցախի Հանրապետության արտգործնախարարությունները: ԱԺ խմբակցություններում պայմանավորվածություն կա օտարերկրյա այցելությունների և փոխայցելությունների ժամանակ տարբեր երկրների խորհրդարանների գործընկերների հետ քննարկել միջոցառմանը մասնակցելու հնարավորությունները:

## Լայն կոնսոլիդացիա իրականանալի նպատակի շուրջ

Պարզ է, որ պետական մակարդակով կազմակերպչական ինչ-որ գործընթաց ընթանում է: Պարզ է, որ ինչ-որ արդյունքներ կլինեն: Պարզ է նաև, որ լայն քաղաքական կոնսոլիդացիայի դեպքում ավելի մեծ արդյունքներ կարելի կլինի ակնկալել: Նախկին իշխանություններն ունեն ինֆորմացիա, փորձ, անձնական կապեր, իսկ ներկա իշխանությունն ունի լծակներ, ուստի ներկաների ու նախկինների համագործակցությունը կարող է արդյունավետ լինել: Այս պարագայում, սակայն, պետք է լուծել պետական մակարդակում կազմակերպվածության հարցը:



Երևան 0001  
Սայաթ Նուլա 19  
Հեռ.՝ +374 10 582638  
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org  
www.ichd.org

Սա կոնկրետ այն դեպքերից է, որ ոչ միայն միջոցառման կազմակերպման հարցում լայն համագործակցության շնորհիվ ավելիին հասնելն է կարևոր, այլ հենց համագործակցության փորձն ինքնին է կարևոր, ինքնանպատակ է կարևոր, որ կարող է նոր կարևոր արդյունքների բերել շատ ավելի մեծ համատեքստում:

Ակնհայտ է սակայն, որ քաղաքական ուժերի հնարավորությունների կոնսոլիդացիան չի կարող կայանալ ազդեցիկ քաղաքական միջավայրի պայմաններում: Հնարավոր չէ առավտոյան «հայիոյել» իրար, իսկ երեկոյան հավաքվել՝ օլիմպիական խաղերի կազմակերպչական միջոցառումներ իրականացնելու: Եթե «զինադադար» չկնքվի և ապահով միջավայր չստեղծվի բոլոր կողմերի համար, համագործակցությունը չի կայանա:

Անցած մեկ տարվա ընթացքում ավելի լուրջ, ազգային նշանակության առիթներ են եղել, որոնց շուրջ կարելի էր համախմբվել, սակայն չի արվել: Համահայկական օլիմպիական խաղերը հերթական առիթն են. կօգտագործվե՞ն դրանք՝ կունենանք նոր քաղաքական միջավայրի հնարավոր սկիզբ Հայաստանում, չե՞ն օգտագործվի՝ ուրեմն դեռ վաղ է, ուրեմն դեռ քաղաքական բևեռները համարում են, որ բավարար չափով «արյունաքամ» չեն եղել:

Մենք էլ կսպասենք հաջորդ առիթին ու էլի հրապարակավ առաջարկություն կանենք:

*Համառոտագիրը մշակվել է 2019թ. մայիսի 27-ին կայացած՝ «Քաղաքական միավորների դերը քաղաքական կոնսենսուսի կայացման գործընթացում. Միասին աշխատելը հնարավորություն է, թե՛՞ անհրաժեշտություն» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:*

*Կոչր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:*

*Քննարկումը կազմակերպվել է Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հետ համագործակցությամբ:*

